# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրի մասին

Դատական դեպարտամենտը, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ՀԲՄԱՊՁԲ-25/02 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին տեղեկատվությունը՝

| | Գնման առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | անվանումը | չափման միավորը | քանակը[1] | | նախահաշվային գինը* | | համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) | պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) |
| | | | | | /ՀՀ դրամ/ | | | |
| | | | առկա ֆինանսական միջոցներով[2] | ընդհանուր | առկա ֆինանսական միջոցներով[3] | ընդհանուր | | |
| 1 | Համակարգիչ ամբողջը մեկում | հատ | * | 300 | * | * | Համակարգիչ ամբողջը մեկում (Մոնոբլոկ).<br>" էկրան՝ առնվազն՝ 23.8 դյույմ, առնվազն՝ FHD (1920x1080) IPS<br>" պրոցեսոր՝ առնվազն Intel Core i7 կամ AMD Ryzen,<br>տուրբո հաճախականությունը՝ առնվազն՝ 4.9 GHz,<br>առնվազն 10C,<br>առնվազն 16T,<br>առնվազն 24MB Smart Cache,<br>"<br>Համակարգչի արտադրման տարեթիվը՝ առնվազն 2024թ.,<br>"<br>օպերատիվ հիշողություն՝ առնվազն 16GB DDR4 3200MHz,<br>"<br>հիշողություն՝ հիմնական կոշտ սկավառակ՝ առնվազն 1 x SSD 500GB, M.2 2280 Gen4 QLC, Երկրորդ հիշողություն՝ կոշտ սկավառակ՝ HDD կամ SSD՝ առնվազն 1TB,<br>"<br>տեսաքարտ՝ ներկառուցված,<br>"<br>կարգավորող ոտիկ՝ համակարգչի էկրանը բարձրացնելու, իջեցնելու և 180 աստիճան պտտելու հնարավորությամբ,<br>" LAN (10/100/1000)՝ ներկառուցված,<br>" WiFi՝ ներկառուցված,<br>" առնվազն BT ՝ ներկառուցված,<br>" առնվազն 5 USB բնիկներ, | Համակարգիչ ամբողջը մեկում (Մոնոբլոկ).<br>" էկրան՝ 23.8 դյույմ, առնվազն՝ FHD (1920x1080) IPS<br>" պրոցեսոր՝ Intel Core i7 կամ AMD Ryzen,<br>տուրբո հաճախականությունը՝ առնվազն՝ 4.9 GHz,<br>առնվազն 10C,<br>առնվազն 16T,<br>առնվազն 24MB Smart Cache,<br>"<br>Համակարգչի արտադրման տարեթիվը՝ առնվազն 2024թ.,<br>"<br>օպերատիվ հիշողություն՝ 16GB DDR4 3200MHz,<br>"<br>հիշողություն՝ հիմնական կոշտ սկավառակ՝ 1 x SSD 500GB, M.2 2280 Gen4 QLC, Երկրորդ հիշողություն՝ կոշտ սկավառակ՝ HDD կամ SSD՝ 1TB,<br>"<br>տեսաքարտ՝ ներկառուցված,<br>"<br>կարգավորող ոտիկ՝ համակարգչի էկրանը բարձրացնելու, իջեցնելու և 180 աստիճան պտտելու հնարավորությամբ,<br>" LAN (10/100/1000)՝ ներկառուցված,<br>" WiFi՝ ներկառուցված,<br>" BT ՝ ներկառուցված,<br>" առնվազն 5 USB բնիկներ, որոնցից առնվազն՝ 2xUSB 3.2 Gen 2 Type |

*1 Լրացվում է կնքված պայմանագրով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը*

*2 Լրացնել տվյալ պայմանագրի շրջանակներում առկա ֆինանսական միջոցներով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը, իսկ պայմանագրով նախատեսված ընդհանուր ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:*

*3 Եթե տվյալ պայմանագրի շրջանակներում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա լրացնել առկա ֆինանսական միջոցներով նախատեսված գումարի չափը, իսկ ընդհանուր գումարը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:*

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | որոնցից առնվազն՝ 2xUSB 3.2 Gen 2 Type A,<br>2xUSB 3.2 Gen 1 Type A, 1xUSB 2.0 Type-C Ports,<br>" առնվազն՝ 1xHDMI Out Port,<br>" ականջակալների / խոսափողի համակցում,<br>" ներկառուցված բարձրախոս՝ առնվազն 2 x 2.5W,<br>" տեսախցիկ՝ առնվազն 2M FHD Webcam,<br>" կրկնակի խոսափող,<br>" նախապես տեղադրված win 11 pro օպերացիոն համակարգ՝ լիցենզավորված և ակտիվացված (անժամկետ). Վաճառողը Գնորդին պետք է տրամադրի օպերացիոն համակարգի կոդերը:<br>" ստեղնաշար և համակարգչային մկնիկ (լարով կամ անլար): Պետք է արտադրված լինեն նույն արտադրողի կողմից: Պետք է կազմեն հավաքածուի մաս,<br>" օպտիկական սկավառակակիր (ներակառուցված կամ առանձին)<br>" հոսանքի սնուցման ադապտեր,<br>" համապատասխանություն՝ RoHS:<br>Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին՝ նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 2 | A,<br>2xUSB 3.2 Gen 1 Type A, 1xUSB 2.0 Type-C Ports,<br>" 1xHDMI Out Port,<br>" ականջակալների / խոսափողի համակցում,<br>" ներկառուցված բարձրախոս՝ առնվազն 2 x 2.5W,<br>" տեսախցիկ՝ առնվազն 2M FHD Webcam,<br>" կրկնակի խոսափող,<br>" նախապես տեղադրված win 11 pro օպերացիոն համակարգ՝ լիցենզավորված և ակտիվացված (անժամկետ). Վաճառողը Գնորդին պետք է տրամադրի օպերացիոն համակարգի կոդերը:<br>" ստեղնաշար և համակարգչային մկնիկ (լարով կամ անլար): Պետք է արտադրված լինեն նույն արտադրողի կողմից: Պետք է կազմեն հավաքածուի մաս,<br>" օպտիկական սկավառակակիր (ներակառուցված կամ առանձին)<br>" հոսանքի սնուցման ադապտեր,<br>" համապատասխանություն՝ RoHS:<br>Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին՝ նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 2 տարի: |

| | | | | | | | տարի: | |
|---|---|---|---|---|---|---|---|---|

*** Սույն գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:**

| | |
|---|---|
| **Կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը** | **Հրատապ բաց մրցույթ. հիմնավորում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 20-րդ հոդվածի 4-րդ մաս:** |

| | | | |
|---|---|---|---|
| **Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը** | | **19.09.2025թ.** | |
| **Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը[4]** | - | - | |
| **Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը** | | **Հարցարդման ստացման** | **Պարզաբանման** |
| | 1 | - | - |

| **Հ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Յուրաքանչյուր մասնակցի հայտով, ներառյալ միաժամանակյա բանակցությունների կազմակերպման արդյունքում ներկայացված գինը /ՀՀ դրամ[5]** | | |
|---|---|---|---|---|
| | | **Գինն առանց ԱԱՀ** | **ԱԱՀ** | **Ընդհանուր** |
| **Չափաբաժին 1** | | | | |
| **1** | «Էլմարկետ» ՍՊԸ | 162 400 000 | 32 480 000 | 194 880 000 |
| **2** | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 247 500 000 | 49 500 000 | 297 000 000 |
| **3** | «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ | 114 000 000 | 22 800 000 | 136 800 000 |
| **4** | Clickamber Limited | 164 034 282 | 32 806 856.4 | 196 841 138.4 |
| **5** | Ա/Ձ Մովսես Շահվերդյան | 70 000 000 | - | 70 000 000 |

**Տվյալներ մերժված հայտերի մասին**

| **Չափա-բաժնի համարը** | **Մասնակցի անվանումը** | **Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար)** | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը** | **Հայտով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին** | **Առաջարկած գնման առարկայի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին** | **Գնային առաջարկ** |
| 1 | Ա/Ձ Մովսես Շահվերդյան | **բավարար** | **անբավարար** | **անբավարար** | **բավարար** |
| 1 | Clickamber Limited | - | - | - | **անբավարար** |
| **Այլ տեղեկություններ** | 1. Ա/Ձ Մովսես Շահվերդյանը սահմանված ժամկետում չի շտկել իր կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները:<br>Ա/Ձ Մովսես Շահվերդյանի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:<br>2. Clickamber Limited-ի կողմից ներկայացված հայտում ներառված գնային առաջարկը (հավելված N 2) կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես հիշյալ հավելվածի աղյուսակում մասնակցի կողմից լրացման ենթակա տվյալները լրացված չեն հայերեն լեզվով (լրացված են անգլերեն):<br>Ելնելով վերոշարադրյալից՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով «ԴԴ-ՀԲՄԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարության 7-րդ պարբերությունը, նույն ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 1.3 կետը, www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Հաճախ ստացվող հարցադրումների վերաբերյալ տրամադրված պարզաբանումներ» բաժնում հրապարակված «ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻՑ ՀԱՃԱԽԱԿԻ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» փաստաթղթի 24-րդ կետով տրված պարզաբանումը՝ Clickamber Limited-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի: | | | | |

| | | |
|---|---|---|
| **Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը** | **03.10.2025թ.** | |
| **Անգործության ժամկետ** | **Անգործության ժամկետի սկիզբ** | **Անգործության ժամկետի ավարտ** |
| | **04.10.2025թ.** | **13.10.2025թ. ներառյալ** |
| **Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը** | **17.10.2025թ.** | |
| **Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը** | **23.10.2025թ.** | |
| **Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը** | **24.10.2025թ.** | |

[4] *Նշվում են հրավերում կատարված բոլոր փոփոխությունների ամսաթվերը:*

[5] *Եթե առաջարկված գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա գները լրացնել փոխարժեքով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:*

| Չափաբաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Պայմանագրի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պայմանագրի համարը | Կնքման ամսաթիվը | Կատարման վերջնաժամկետը | Կանխավճարի չափը | Գինը | |
| | | | | | | ՀՀ դրամ | |
| | | | | | | Առկա ֆինանսական միջոցներով** | Ընդհանուր[6] |
| 1 | «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ | ԴԴ-ՀԲՄԱՊՁԲ-25/02 | 24.10.2025թ. | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր: | - | - | 136 800 000 |

**Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն**

| Չափաբաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Հասցե, հեռ. | Էլ.-փոստ | Բանկային հաշիվը | ՀՎՀՀ[7] / Անձնագրի համարը և սերիան |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ | Հասցե՝ ք.Երևան, Արաբկիր 19փ. 4շ, 5բն, հեռ. 095 566 609 | hpartqaxaqaci@gmail.com | 19300462879100 | 00180633 |

| | |
|---|---|
| Այլ տեղեկություններ | Ծանոթություն՝ - |

**Սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո 3 օրացուցային օրվա ընթացքում գնման սույն գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները կարող են պատվիրատուին ներկայացնել պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ:**
**Պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) հետ համատեղ կարող են մասնակցել նաև լիազորված մարմնի կողմից վարվող ցուցակում ընդգրկված՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, լրատվական գործունեություն իրականացնող անձինք կամ վերջիններիս ներկայացուցիչները (այսուհետ՝ դիտորդներ): Դիտորդները պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացի օրվա, ժամի ու վայրի մասին կարող են տեղեկանալ պատասխանատու ստորաբաժանումից (մասնագիտական խմբից)՝ հեռախոսով կամ գրավոր հարցումն ուղարկելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գրավոր հարցումը ստանալու պահին դեռևս հայտնի չեն ընդունման գործընթացի օրը, ժամն ու վայրը, ապա այդ տեղեկատվությունը տրամադրվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 50.1-ին կետի 2-րդ ենթակետում սահմանված ժամկետում: Պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին ներկայանալիս դիտորդները պարտավոր են ներկայացնել Կարգի 50.2-րդ կետում նշված վկայականը և իրենց անձը հաստատող փաստաթուղթը:**
**Վերոհիշյալ գրավոր պահանջին կից ներկայացվում են՝**
**ա. ֆիզիկական անձին տրամադրված լիազորագրի բնօրինակը: Ընդ որում, լիազորված ֆիզիկական անձանց քանակը չի կարող գերազանցել երկուսը, իսկ լիազորված անձն անձամբ պետք է կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է,**
**բ. ինչպես գործընթացին մասնակցելու պահանջ ներկայացրած, այնպես էլ լիազորված ֆիզիկական անձանց կողմից ստորագրված բնօրինակ հայտարարությունները՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին,**
**գ. այն էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնց միջոցով պատվիրատուն կարող է կապ հաստատել պահանջը ներկայացրած անձի և վերջինիս կողմից լիազորված ֆիզիկական անձի հետ.**
**Կնքված պայմանագրի մասին հայտարարության մեջ նշված ժամկետը լրանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) ղեկավարը կնքված պայմանագրի հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեից ծանուցում է ուղարկում սահմանված պահանջներին՝**
**ա. համապատասխանող գրություն ներկայացրած անձանց՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման գործընթացին վերջիններիս մասնակցությունը հաստատված լինելու մասին՝ ծանուցումը և շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակից արտատպված օրինակները հրապարակելով նաև տեղեկագրում: Գործընթացին մասնակցության շրջանակում լիազորված ֆիզիկական անձի փոփոխությունն իրականացվում է Կարգի 50.1 կետով սահմանված կարգով՝ պատվիրատուին ներկայացվող գրության հիման վրա,**
**բ. չհամապատասխանող գրություն ներկայացրած անձին՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման գործընթացին վերջինիս մասնակցությունը հաստատված չլինելու մասին՝ նշելով դրա համար հիմք հանդիսացած հանգամանքները:**
**Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեն է՝ ddmatakararum@court.am:**

| | |
|---|---|
| **Մասնակիցների ներգրավման նպատակով <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն իրականացված** | **Մասնակիցների ներգրավման նպատակով իրականացվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված հրապարակումները:** |

---

*6 Եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա ընդհանուր գինը լրացնել «Ընդհանուր» սյունակում, իսկ առկա ֆինանսական միջոցների մասով՝ «Առկա ֆինանսական միջոցներով» սյունյակում:*
*7 Չի լրացվում, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողի հաշվարկային հաշիվ չունեցող անձը:*

| | |
|---|---|
| հրապարակումների մասին տեղեկությունները | |
| | |
| Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը | Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել: |
| | |
| Գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները | Գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել: |
| | |
| Այլ անհրաժեշտ տեղեկություններ | - |
| | |

| Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող | | |
|---|---|---|
| Անուն, Ազգանուն | Հեռախոս | Էլ. փոստի հասցեն |
| Մարիամ Հայրապետյան | 010-511-783 | ddgnumner@court.am |